Կապսի ջրամբար

Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Կապսի պատվարի շինարարական աշխատանքները դադարեցվել են 1994թվականին. իրականացվել է միայն 20մ բարձրությամբ պատվարի մարմնի լիցք: Կիսաավարտ պատվարը ներկայումս իրենից վտանգ է ներկայացնում, քանի որ թունելի փլուզման, կամ մեծ վարարման դեպքում կիսակառույց ջրամբարում արտահոսք կլինի պատվարի վրայով և պատվարի ճեղքում: Դա մեծ վնասներ կհասցնի պատվարի ստորին բիեֆում գտնվող համայնքներին, այդ թվում կծածկի Գյումրի քաղաքի մի մասը:

Ծրագրի իրականացման ընթացքում Գերմանիայի վերակառուցման ու զարգացման բանկի (KFW) ֆինանսական աջակցության միջոցներով ավարտվել է «ՋՌՀԿ/Ախուրյան գետ-Կապսի ջրամբարի և Կապսի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում» տեխնիկա-տնտեսական հիմնավորման (ՏՏՀ) ուսումնասիրությունը: ՏՏՀ ուսումնասիրության ընթացքում KFW բանկի և ՋՏ «ԾԻԳ» ՊՀ-ի կողմից քննարկվել են ծրագրի հետագա իրականացման գործընթացը՝ ըստ որի որոշվեց Փուլ 1-ով իրականացնել Կապսի ջրամբարը 25 մլն մ^3 ընդհանուր ծավալով: 25 մլն մ^3 ծավալով Կապսի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների մանրամասն նախագծման, շինարարության, շին. տեխնիկական վերահսկողության և խորհրդատվական ծառայությունների մատուցման ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 60.0 մլն Եվրո, այդ թվում վարկ՝ 50.0 մլն. եվրո, որի համար պատրաստված վարկային համաձայնագիրը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և ստորագրվել 2014 թվականի դեկտեմբերի 19-ին:

Մանրամասն նախագծման և ջրամբարի կառուցման աշխատանքները, ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 4,5 – 5 տարի:

Կապսի 25 մլն մ^3 ծավալով ջրամբարի կառուցումը կբարձրացնի Շիրակի և Ախուրյանի Աջափնյա ջրանցքների իշխման տակ գտնվող հողատարածքների ջրապահովվածության մակարդակը: Կապսի 25 մլն մ^3 ծավալով ջրամբարի իշխման տակ տեղաբաշխված է «Շիրակ» ՋՕԸ–ի կողմից սպասարկվող (Շիրակի մայր ջրանցք) համայնքների շուրջ 12325 հա հողատարածքներ: Կանոնավոր և հուսալի ոռոգման արդյունքում կավելանան գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, ինչպես նաև ֆերմերները կսկսեն մշակել ավելի եկամտաբեր մշակաբույսեր: